

կան կամ Բիւզանդական կայսրութեանց ենթարկեալ մարդ:

Բայց քաղաքական այս պարագայական անջատումը կարելի չէ, եւ սխալ է իրրեւ բոլորովին անջատում մը համարել միեւնոյն անգղի եւ ժողովրդեան հատուածներու: Եւ արդէն միշտ այսպէս եղած չէր. ընդհակառակն բուն Հայ ժողովրդեան իրրեւ օրօրանն հոս հաստատուած ըլլալով⁽²⁾ մնաց այն միշտ դարերու շրջանին մէջ Հայոց տուն, եւ նոյն իսկ երբ օտար տարրերու խուժումը նուազեցուց ազդային բնիկ տարրը, սա միշտ պահեց իր գերակշռութիւնը նաեւ մինչեւ մեր օրերը, եթէ ոչ թուական առաւելութեամբ՝ գէթ իմացական եւ ընդհանուր զարգացման

անուան մէջ, եւ կ'աւանդէ որ Օգոստոս Կեսար անուանեց զայն Կեսարիա միացնելով Փոքր Հայաստանի հետ: Մամուր հազուադէպ անուն մը չէ Արեւմտեան պատմութեան մէջ եւ նոյն իսկ Եգիպտոսի Ստրապոն կառավարիչը, Աղեքսանդրի առջեւ անձնատուր զիջանդը, մի եւ նոյն անուամբ կը կոչուէր:

Խորենացին ընդարձակաբար սահման մըն ալ դիտէ Փոքր Հայոց, երբ կը պատմէ որ Արշակ Մեծն Պարթեւներուն վրայ թագաւորելով իր Վաղարշակ եղբայրը կը կարգէ Հայաստանի թագաւոր եւ անոր պետութեան սահմանները կ'որոշէ Մծրին մայրաքաղաքով, — «Չման ինչ յարեմտից Ասորոց եւ զՊարթեւսն եւ զԱսիա եւ զամենայն Միջերկրեայս եւ զԹիւսագիւղս, ի ծովէն Պոնտոսի մինչեւ ի տեղիս ուր Կաւկաս յարեմտեանն յաճի ծով, եւ զԱտրպատականն...»:

(2) Ինչպէս վերեւ տեսանք Reinach-ի վկայութեամբ որուն զօրաւոր հաստատութիւնը կը բերէ նաեւ Maspero (Histoire Ancienne des peuples de l'Orient Classique - Les Empires. էջ 777) խօսելով Հայոց գէպ յԱրեւելս ծաւալման վրայ. Plus au Nord, les ouratiens et les peuples de l'ancien Nairi... perdaient du terrain à chaque génération sous la poussée constante des Arméniens... Les Arméniens, charriés toujours vers l'Est comme d'un courant irrésistible, escadaient maintenant le massif montagneux de l'Ararat... l'Ourartou avait disparu de la scène, mais une Arménie prospérait aux lieux mêmes où il avait trôné, et ses princes, alliés à la famille Achéménide, exerçaient une véritable autorité royale sous le titre modeste de Satrape. Grâce à eux, les religions et les mœurs de l'Iran se propageaient dans les marches orientales de l'Asie Mineure. Elles s'infiltraient au bassin de l'Iris et de l'Halys, dans la Cappadoce, dans la Taurus, et elles y implantaient l'usage des écritures officielles de l'empire, le cunéiforme persan et l'araméen, dans les actes publics ou dans les inscriptions et sur les monnaies - Հոս կարելի է պատկերացուած տեսնել նաեւ երբեք տեղաբնիկ ստորապնդու զրամներու որոնց միջինը անտարակոյս հայկականներու դիմագծութեան բնադրուած կը ներկայացնէ:

ազդեցութեամբ: Հոս⁽³⁾ է որ Հայր առաջին անգամ ունեցաւ իր թագաւորը պատմական դարերու շրջանին, անմիջապէս յետ կործանելու եգիպտական միահեծան պետութեան, արդէն իսկ հինգ դար առաջ նախ քան մեր քրիստոնէական թուականը: Հրանտ⁽⁴⁾ մին էր Դարեհի վեց դաւակիցներէն կեղծ Շմերտ մողին գէմ եւ արժանի եղաւ հայկական թագաւորութեան: Աղեքսանդր ի նշան երախտադրութեան տուաւ այդ թագը Միհրանին⁽⁵⁾ որ Սարգիսէն յանձնած էր իրեն:

Յետ Աղեքսանդրի, Հայաստան եղաւ բաժին Նեոպտոլոմէոսի, որ Բերքիկասի եւ Եւմենէսի գէմ մեծ դաշնակցութեան մասնակցելով պարտուեցաւ եւ սպաննուե-

(3) Եգիպտոսի բազմադարեան պետութեան կործանումը բոլորովին յեղաշրջեց ամբողջ հին աշխարհի քաղաքական կազմութիւնը, ընդարձակելով մը, որ սակայն քիչ վերջ ուժանայաւ, ինքն ալ տեղի սա եւս յետոյ իւր կարգին, անհերքելի վկայ կանգնելով մարդկային բարտի անկախունութեան: Կարժէ կարգաւ Մասերոյի 662, 776, եւ 779 էջերը:

(4) Հրանտ, յոյն եւ լատին պատմիչներու նաեւ Aryandes), մին էր Դարեհի հետ դաւակիցող արքայ Gaumata - Կոմիտաս (կեղծ Շմերտ) մողը զաւորեցուցին Դարեհը եւ սա Հրանտին տուաւ թեան մէջ զարդաւորելու կազմող ամենազինուոր: Գործերէն մին էր այս գէպը որով բոլոր աշխարհի քաղաքական յեղաշրջումը յառաջ եկաւ ինչպէս տարակոյս մեր Հայկազանց շրջանի բոլոր ուժանց կեղծեօք երեւակայուած եւ իրրեւ Խորենացիէն հաստատելու Խորենացու շրջանն է, որ կու գայ հետ անոր անկեղծ ճշմարտախօսութիւնը: Հրանտ անոն ժառանգական իշխանութիւնը տեսնեց մինչեւ Անտիոքոս Մեծին օրերը:

(5) Միհրան Սարգիսէի կուսակալն էր երբ դռները եւ Աղեքսանդր խոստացաւ որ յետ յաղթութեան պիտի շնորհէր վերստին իրենց անկախ պետութիւնը: Միշտ մեծ պատուով պահեց զինքը եւ անոր կանայք տաղնապի ու ողորկածի մասնուած համար, իրրեւ պարսկերէն լեզուի հմուտ տեղեակ, բայց յետոյ վախճալով մի գուցէ աւելի զայրախան մտերիմութիւնն մին: Յետ Կաւկասեան ճակատաժամին Աղեքսանդր զՄիհրան անուանեց թագաւոր Հայաստանի:

ցաւ: Իրաւսի ճակատամարտէն վերջ եղաւ Սելեւկեան դաւառ մը եւ այս միջոցին հաւանօրէն բաժնուեցաւ երկու պետութեանց: Անտիոքոս մեծին պարտութենէն վերջ 190-ին Արտաշէս եւ Զարեհ ինքնազուլ իշխեցին եւ դաշնակցեցան Հռոմայեցուց:

Այս Արտաշէսն է որ 180-ին Փոքր Ասիոյ միւս բազմաթիւ իշխաններուն հետ կազմեց մեծ դաշնակցութիւնը, ուղեց մեծոքը՝ նեւ Միհրդարդան Մոփաց իշխանը եւ միայն Կապադովկիոյ իշխանին յորդորներուն անսալով ետ կեցաւ այս ոճրագործութենէն: Փոքր Հայոց թագաւորները կամ սատրապները եւ իշխանները մեր միւս բոլոր նախարարութեանց նման մասնակցէին ազդային բանակին⁽⁶⁾ զործառնութեանց, մինչեւ որ Կեսարի եւ Օգոստոսի լեզէոնները վերածեցին զայն հռոմէական մարդիկ. թողլով միշտ իրենց յամակալութեան ինքնավարութիւն մը, մինչեւ բոլորովին ձուլուած հռոմէական կայսրութեան՝ մաս առ մաս անջատմամբ: Եւ իրաւ, որ երկու Հայաստանները կ'որոշէր իր աջ ու ձախ ափերուն վրայ, խրամատ մը չէր զանոնք իրարմէ զատելու համար. մը չէր զանոնք իրարմէ զատելու համար. այլ ընդհակառակն՝ էր անոնց ներքին պե-

տական հոսանքու մեծ պողոտան, որուն վրայ կը սուրային ողորակապ նաւերու տորմիդները, երբեմն բանակներ փոխադրելով դէպի ասորական եւ պարսկական աշխարհներ եւ աւելի յաճախ վաճառականական հարստութեանց փոխանցումներ կատարելով:

Կապադովկիա, Փոքր Հայք, Մոփաց եւ Ալմանաց մեծ գաւառները ամենաաւերտ յարաբերութեան ձուլումն ու միութիւն ունէին իրարու հետ⁽⁷⁾ զրեթէ միշտ, երբեմն մինչեւ Կորդուաց գաւառն ալ տարածուելով: Ինչպէս Սատաղայ փոքրիկ բայց ազդեցիկ կեղծոն մ'էր իրրեւ սահմանաձայր, Հայ եւ Հռոմ յարաբերութեանց եւ բանակետող հռոմէական զօրութեան, նոյնպէս փոխադարձաբար թոմիզա կապադովկիոյ ամենակարեւոր զղեակ բերդն էր Եփրատէն անդին: Արիարադիա, որ եւ Մամանդոս կամ ըստ Ստրաբոնի Տագմինտա, զրեթէ առհաւուրեան բնախօսական օրէնքի զօրութեամբ, յետ երկար դարերու պատմական յետադարձ մ'ունեցաւ միջին դարու մէջ, երբ 1064-ին վերըստին Հայոց սեպհական իրաւունքն զարձաւ, երբ Գաղիկ վանանդայ թագաւորը իր աշխարհը փոխանակեց Բիւզանդական

(6) Փոքր Հայոց Սատրապն ալ իր զօրաց ջոկատով միւս նախարարաց նման կուուեցաւ Աղեքսանդրի զէմ Կաւկասեան ճակատամարտին մէջ ուր զրի գէմ Կաւկասեան ճակատամարտին խորակալ-Դարեհի վատութեամբ եւ փախստեամբ խորակալութեան նաեւ հայկական անդրանիկ պետութիւնը որուն կը թագաւորէր վահագ, ըստ Խորենացուց:

(7) Միեւնոյն արքայական գերդաստանն էր որ իր զանազան շատուիդներով կը թագաւորէր պարսկական ընդարձակածաւալ պետութեան զանազան նահանգներուն վրայ, մանաւանդ Պարսկաստանի, Հայոց, Մոփաց եւ Կապադովկիոյ վրայ որոնք ընդարձակութեան կը յատկացուէին, մանաւանդ Հայաստանը: Արտափեանէս, Դարեհի եղբայրը, Փոքր Ասիոյ արեւմտեան գաւառներուն կուսակալն էր, եւ ինքն Դարեհ Կորդուանոս Պարսից արքայական զաւր բարձրանալէն առաջ Հայաստանի կառավարիչ-թագաւորն էր:

Այսպէս նաեւ Քրիստոսէ յառաջ Ե դարուն վերջերը ունինք մեր Հրանտեանց ցեղէն Դիապիւռնէս օրդի Հրանտի մը, ընդհանուր հրամանատար Պարսկաստանի արքունի զօրաց արեւմտեան բանակին, որ եւ միանգամայն Սատրապ ու կառավարիչն է Լիւզիոյ - Փոնդիոյ եւ Կապադովկիոյ, մինչդեռ իր եղբայրը Դիւրիդիոյն, փեսայացած Ամեստրիս իշխանուհւոյն, հայրենի հայկական ժառանգու-

թեան Սատրապն էր, եւ քոյրը Սատրապ ամուսնացած էր Արսիքայ արքայորդուոյն հետ: - Ծանօթ է անոնց ուրիշ եղբայր մ'ալ՝ Արտաշէս անուամբ, որ ընտանեացը բոլորական շարքէն ազատուողներէն մին է Դիապիւռնէսի եւ Սատրապի հետ եւ որ իւր ցեղական ժառանգութիւնը կը շարունակէ: - Կանսիս Կ'աւանդէ որ Դիւրիդիոյն իր վրայ յարձակողներէն 37 հոգի մի առ մի կը սպաննէ: Հաւանօրէն Դիւրիդիոյն զաւակներէն մին էր ու իր Հրանտ մ'ալ որ այս անգամ պատմութեան մէջ կը ներկայանայ հարազատ հայերենաձեւ Օրոնդէս անուանակոչութեամբ՝ եւ որ բացի Հայաստանի ժառանգական պետութենէն կը կառավարէր իրրեւ Սատրապ նաեւ Միւսիոյ գաւառը: Չմոռնալ յիշելու ուրիշ Հրանտ մ'ալ որ Թերմոպիլեան ճակատամարտին մէջ Մատեան Անմահ գունդին հրամանատարն էր Քսերքսէսի Յունաստան արշաւանքին: - Այսպէս Հրանտեանք պատմութեան մէջ կը ներկայանան ոչ նուազ պանծալիք քան ուրիշ արքայական ցեղերը որ Հայաստանը կառավարած են: Ծանօթ չէ բնաւ թէ ո'ր էր կամ Հայաստանի ո'ր գաւառի մէջ էր այս Հրանտեանց արքունի ստանը, թէպէտ ըստ Պլինիոսի տեղեկութեան կարելի է համարել Աղիարէն նահանգը Կաւկասեան քաղաքով:

կայսրութեան հետ եւ փոխարէն ստացաւ Ամասիա, Կոմանա, Լարիսսա եւ Ծամանդոս: Մեծ Հայոց հինգ նահանգները, որ Ազգաց գաւառ անուանակոչութեամբ ինքնավար պետութիւն մը ունէին կամ հռոմէական կալուած կը համարուէին, հայ կեդրոնին հետ միշտ կը պահէին իրենց միութիւնը առանց երբեք ազգայնական կապը խզելու: Պոլեմոնի ալրուոյն ամուսնութեամբ, Փոքր Հայք եւ Կապադովկիա բոլորովին ձուլուեցան միասին, ինչպէս Արիորարդան Կապադովկիոյ թագաւորն իր կարգին ի մի ձուլեց Կորդուաց եւ Ծոփաց գաւառները իր աշխարհին հետ:

Արբիանոս այս երկու նահանգները կը ճանչնայ մի միակ Փոքր Հայք անուան ներքեւ, ինչպէս ուրիշներ կ'անուանեն երբեմն Ներքին Հայք, եւ նշանակալից է իւր բացատրութիւնը, երբ այս աշխարհաբանին համար կ'ըսէ «գոթ ալժմ փոքր Հայք անուանեմ», ցուցնելով որ Մեծ եւ Փոքրի բաժանումը Հայաստանի պետութեան համար ոչ մէկ էական կամ անջատիչ հանգամանք ունէր. եւ յիշուի, այս կոչումը շատ հաւանօրէն Սելեւկեանց վերջին շրջաններուն ատեն հնարուեցաւ. անկէ առաջ, ինչպէս նաեւ վերջը, նոյն իսկ մինչեւ Դ դարուն, ինչպէս տեսանք Ս. Բարսղի թուղթերուն մէջ, անխորհր կը դործածուէր իսկ Կապադովկիա եւ կամ զուտ Հայաստան կոչումը. այս պատճառաւ է որ Լուկիանոս բանաստեղծին ծննդավայր Սամուսատը, ոմանք կը դնեն Կապադովկիոյ մէջ:

Անշուշտ շատ հետաքրքրական պիտի ըլլար եւ հրահանգիչ՝ հետազօտելը Կապադովկիոյ թագաւորներուն Արիարաք կոչումը իրենց Արիարաքի մայրաքաղաքով եւ անոնց մեր նուիրական Այրարատ լեռան եւ աշխարհին հետ ունեցած կապակցութիւնը. սակայն այսպիսի յիշատակներ շատ կը հեռացնեն զմեզ մեր յառաջադիր նպատակէն: Չմոռնանք միայն որ մինչեւ իսկ Դ դարուն վերջերը տակաւին Պապ Վաղէստէն կը պահանջէր Եղեւսիան, իբր Հայոց հիմնած սեպհական քա-

ղաք եւ Կեսարիան ուրիշ տասը քաղաքներով, իբրեւ բուն վաղեմի ազգային իրաւունք. ինչպէս դեռ աւելի վերջն ալ մի եւ նոյն իրաւանց հաստատութիւնը կը հանդիպինք Գիրք Թղթոցի մէջ Կեսարիոյ եւ Ուրմիոյ համար⁽⁸⁾:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԳՄԱՆՔՆԵՐԸ

Պատմութիւնը տակաւին պիտի լուսաւորէ զմեզ ուրիշ կարեւոր խնդրի մը նկատմամբ: Երբ կ'ըսուի թէ քրիստոնէութիւնը մինչեւ Դ դարուն սկիզբը, այսինքն մուտք չէր գտած Հայաստանի մէջ, հարկ է միանգամայն բացատրել թէ ինչ պատճառներ կային զայն խափանելու:

Արտաքին ոչ մէկ պատճառ: Առաքելական քարոզիչները մղուած էին իրենց քայլերուն մէջ Յիսուսի ձայնէն, որուն արձագանգը կը հնչէր անդադար իրենց սրտերուն մէջ. Գնացէ՛ք այսուհետեւ աշակերտեցէ՛ք գամեմայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զմոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ուսուցէ՛ք անոսս պահել գոթ ինչ պատուիրեցի ձեզ, եւ ահաւասիկ եւ ընդ ձեզ եմ մինչեւ ի կատարած աշխարհի:

Հետեւաբար պատմութեան լոյսին մէջ պէտք ենք այսօր փնտռել ներքին պատճառները, որոնք միայն կրնային այդ արդելը յարուցանել, հիմնուելով կա՛մ պետական օրէնքներու սաստիկ վրայ եւ կա՛մ ժողովրդեան կրօնական հաւատալիքներուն ու պաշտամունքներուն տարամերժ մոլեռանդութեան վրայ: Արդ, այս երկուքն ալ թէ Մեծ եւ թէ Փոքր Հայաստանի համար դոյութիւն չունէին: Հայաստան, իբր մասն կամ նահանգ պարսկային ծովածաւալ պետութեան, հնուց ի վեր կը վայելէր անոր ներքին խաղաղական շինարար եւ ազատական ոգին: Այդ քաղաքա-

(8) Գիրք Թղթոց - Մատենադրութիւն նախնեաց - Թիֆլիս 1901 (էջ 533-6) վանական Վարդապետի ազգային վաղեմի աւանդութեանց խառնաշփոթ խճողմանց մէջ:

կան ուղկիւնոսին վրայ, որ փոքր Ասիոյ արեւմտեան ափերէն սկսեալ կը տարածուէր մինչեւ Չինաստանի կեդրոնը եւ Կովկասի լեռներէն կ'իջնէր մինչեւ հնդկական ուղկիւնոսը անթիւ բազմազան ազդերու եւ ժողովուրդներու տարբեր պարունակելով իր մէջ, կը տիրէր օրէնք մը լի խաղաղութեամբ - Ազատ ներքին վարչութիւն իւրաքանչիւր նահանգներու եւ հաւասարութիւն ու համեմատութիւն ամենուն, կեդրոնական ուղղութեան ներքեւ եւ իրարու հանդէպ: Reinach Պարսկական վարչութեան այս ազատական ոգին կը բնորոշէ իբր Symbole d'ordre et de prospérité եւ կը ցուցադրէ հակառակ մակերդնական բռնապետութեան. Les Cappadociens et les Paphlagoniens subirent pendant vingt ans la domination des Macédoniens, sans se réconcilier avec elle. Les fréquents changements de Satrapes, les sanglantes querelles des successeurs d'Alexandre dont la Cappadoce fut plusieurs fois le champ de bataille, un pareil régime n'était pas fait pour gagner les coeurs de populations habituées sous le gouvernement perse à la paix et à la stabilité⁽⁹⁾.

Միւս կողմէն պէտք է անտեսել որ մեր խնդրին լուսաւորութեան համար կարեւոր դարաշրջաններուն, այսինքն քրիստոնէութեան առաջին երեք դարերուն մէջ, Փոքր Հայք հռոմէական օրէնքներուն եւ վարչութեան հետ բոլորովին հաշտ քաղաքականութիւն մ'ունէր, վայելելով հանդերձ ներքին գրեթէ ինքնավար ազատութիւն¹⁰: Երբեք գրեթէ ինքնավար ազատութիւն¹⁰: Իսկ Մեծ Հայաստան, ի բաց առեալ ուղղակի պատերազմական ընդհարումներուն չընթանալով որոնք շատ ցանցառօրէն եւ չընթանալով որոնք շատ ցանցառօրէն եւ սակաւատեւ կը պատահէին, բոլոր միւս ժամանակները հաշտ ու խաղաղ դաշնակ-

ցութեամբ բարեյոժար յարաբերութիւն մը կը տիրէր երկուստեք. ծանօթ են նաեւ երբ զանազան անդամներ հռոմայեցի լեզուները պարսկական փաղանգներուն կ'ընդհարէին Հայաստանի ազատութեան համար: Դարձեալ, երբ նկատենք որ Հայաստան ընդ մէջ Հռոմայ կայսրութեան եւ Պարսից պետութեան, որ է ըսել ընդ մէջ ամբողջ Արեւելքի եւ Արեւմուտքի վաճառականական յարաբերութեանց, սովորական եւ ընտրելադոյն ճանապարհն էր, եւ բոլոր հարստութեանց փոխանակութիւնները կը կատարուէին Մծրին - Արտաշատ - Սինկարա գիծով, եւ որ նոյն ինքն Հայք դերազանցապէս վաճառական ժողովուրդ մը, կրնանք ապահով հաստատել որ պետական ո՛ր եւ է արդելք կամ խափանարար պատճառ դոյութիւն չունէր քրիստոնէութեան Հայաստան մտնելուն:

Կա՞ր արդեօք կրօնական արդելք: Պատմութիւնը այս հարցման ալ կը պատասխանէ՝ Ո՛չ: Ընդհակառակն՝ կը պարզէ մեր առջեւ ամենանպաստաւոր պարագաները: Գիտենք որ Պարսկաստանի մէջ երբեք պաշտօնական հալածանք տեղի չունեցաւ քրիստոնէութեան դէմ մինչեւ Շապուհ եւ Յազկերտներու թագաւորութեանց շրջանը, այսինքն մինչեւ Դ դար եւ աւելի վերջ եւ սաստկացաւ երբ Կոստանդինոսի դարձէն վերջ կայսրութեան կրօնքը եղաւ քրիստոնէութիւնը, հետեւաբար ներքին քրիստոնեայ տարրերը հայրենիքին ապահովութեան կասկածելի համարուեցան: Անկէ առաջ մանաւանդ շատ յօժարութեամբ եւ բարեսիրութեամբ պարսից կողմէն կը հիւրընկալուէին հռոմէական կայսրութեան սահմաններէն հալածուած կամ փախստական քրիստոնեաները⁽¹¹⁾:

(9) Reinach Théodore Mitridate Eupator, roi de Pont. Paris, 1890.

(10) Այս մանաւանդ հնագոյն շրջաններուն երբ քանի մը կեդրոններուն մէջ միայն հռոմէական լեզուներու ջոկատներ իրենց բանակեղծ հաստատած էին, մինչեւ որ տակաւ առ տակաւ նաեւ ներքին վարչական կազմը անցաւ հռոմէական օրէնքներու ներքեւ, տեղ տեղ իբրեւ ծերակուսական եւ այլուր իբրեւ կայսերական մարզեր:

(11) Dom. Ch. Poulet: Histoire de l'Eglise --

Tome I — Paris. 1956 p. 105. «Par hostilité pour Rome, la Perse reçut favorablement les émigrés chrétiens».

Միեւնոյն դրութիւնը կը հաստատուի նաեւ Հայաստանի համար երբ նկատենք Ս. Հովսիփմեանց դէպքը, ուրոնք կ'ապաւինին Հայաստան եւ անվրդով կ'ապրին մինչեւ որ խնդրակներու միջոցաւ խուսափուին ո՛չ թէ քրիստոնեայ ըլլալուն՝ այլ բոլորովին տարբեր պատճառաւ: Լաւ գիտելու կէտ մ'է՛ այս:

